ԽՈՏՈՐՋՐԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Վ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խոտորջուրը Կարնո-Էրզրումի կուսակալության Կիսկիմ գավառի հայաբնակ ամենանշանավոր վայրերից էր և գտնվում էր պատմական Տայքում, համանուն գետի ափին, որ Ճորոխի մի Հյուղն է։ Կիսկիմ գավառը տարածվում է Սպերից հյուսիս-արևելք և հասնում Անդրկովկասի մինչ 1914 թ. սահմանը։ Խոտորջուրը չորս կողմից շրջապատված է բարձրագագաթ, անտառապատ ու գեղատեսիլ լեռներով, որոնք Պարխարյան լեռնաշղթայի մի մասն են կազմում։ Ըստ մեր պատմագիրների այստեղ է պատերազմել Վարգան Մամիկոնյանի եղբայր Համայակը պարսկական զորագնդերի դեմ։ Այս լեռներում բարձրանում է երկնասլաց, ձյունապատ Քաջ-քար լեռը, որի գագաթից երևում են Սև ծովն ու նրա ափերը։

Խոտորջուրը բաղկացած էր տաս գյուղերից[2], որոնց միանում էին նաև Մոխուրկուտի երեք գյուղերը։ Եվ այս 13 գյուղերի բնակչության թիվը 1915 թ. առաջ հասնում էր մոտ հինգ հազարի։

1915 թ. կոտորածների ժամանակ 1000—1200 խոտորջուրցիներ Ռուսաստանում ու Կովկասում էին գտնվում, այդ պատճառով էլ նրանք աղատվեցին կոտորածից, իսկ հայրենիքում մնացածները գազանարար հոշոտվեցին ու սպանվեցին։ Չորս հարյուր հոգուց աղատվեցին միայն մի քանի տասնյակ մարդ[3]։

Երբ 1916 թ. փետրվարին ռուսական զորքը գրավեց Էրզրումը և այդ վիլայեթի մյուս նշանավոր վայրերը, որոնց թվում և Խոտորջուրը, Ռուսաստանում ու Կովկասում ապրող պանդուխտ խոտորջուրցիներից շատերը վերադարձան հայրենիք և սկսեցին ավերված ու քանդված բնակավայրերի վերաշինությունը։ Խոտորջրի հայրենադարձների կողմից համայնքի թաղապետ է ընտրվում Օգոստինոս Սչանյանը, իսկ միլիցիայի պետ՝ Վահան Իաշարատյանը, որոնք ռուսական զորամասերի կողմից էլ ճանաչվում են իրենց պաշտոններում։

Հայրենադարձ խոտորջուրցիները, ձմռան ապրուստը ապահովելով, պատրաստվում են 1918 թ. գարնան համար։ Բայց հենց այդ ժամանակ էլ նոր փոթորիկ է բարձրանում, և հայրենադարձները ստիպված են լինում վերաշինման փոխարեն ղենք վերցնել ու ինքնապաշտպանության դիմել...

Ռուսական զորքերն Արևմտյան Հայաստանից նահանջում են։ Խոտորջուրցիները, ռազմաճակատից հեռու գտնվելով, անտեղյակ են մնում ռուս զորքի և հայ կամավորների նահանջին։ Լուրեր են պտտվում թուրքերի հարձակման մասին։ Դրությունը տագնապալից է դառնում։ Շրջապատված լինելով թշնամուն կանոնավոր զորքերով ու թուրք ջարդարարներով և ոչ մի տեղից օգնության հույս չունենալով, խոտորջուրցիները դիմում են ինքնապաշտպանության։ Նրանք իրենց ուժերն առանձին խմբերի են բաժանում, որոնք մի քանի գյուղերի բարձունքներում, քարաժայռերում ու քարայրներում ինքնապաշտպանության համար հարմար դիրքեր են գրավում։

---

1 «Խոտորջուր կամ Խոտրջուր գտնվում է Տայքի արևմտյան կողմը, այժմյան Կիսկիմի վիճակում, Ճորոխի հյուսիսային կողմը, համանուն գետակի ափին, շրջապատված է Պարխարի լեռների ճյուղերով...» (Ա վ ե տ ի ք Տ ե ր-Հ ա կ ո ր յ ա ն, Ֆիզիկական, ազգագրական և քաղաքական աշխարհագրություն Հայաստանի, Թիֆլիս, 1914, էջ 174)։ «Խոտորջուրը մի լեռնոտ և խորը ձորերով լիք տեղ է», («Փորձ», հունվար, 1879, էջ 192)։

2 Հ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Հանրամատչելի հանրագիտական բառարան, Թիֆլիս, 1915, էջ 1061։

3 «Երբ 1915 թ. կ. Պոլսո կառավարության հրամանով հայաբնակ գավառները սկսան պարպվել, Տայքի բնակչությունն (Խոտորջուրը) ալ զերծ չմնաց համաճարակ աղետեն, այն բնակչությունը, որ նույնիսկ համիտյան սպանդներեն (95—96-ին) անվնաս մնացած էր։ Երկրին ամենեն խաղաղ ու անվրդով տարրը բնաջնջվեցավ ամենավայրենի եղանակով» (Պ. Ա վ տ ա լ յ ա ն, Տայքի միությունը, Ալեքսանդրապոլ, 1920, էջ 15)։

1917 թ. գեկտեմբերի 23-ին Վեհիպ փաշայի հրամանատարության տակ գտնվող թուրքական զորքերի մի ջոկատ հարձակվում է Խոտորջրի վրա, և մի բուռ հայրենասեր խոտորջուրցիներ օրհասական կռվի են բռնվում թուրքական կանոնավոր զորքերի և չեթեների հետ[4]։

Չնայած թուրք զորամասի գերազանց ուժերին ու ռազմական առավելություններին, խոտորջուրցիները արիաբար դիմադրում են թշնամու բոլոր հարձակումներին։ Կռիվը տևում է չորս օր. ամենաուժեղ մարտերը տեղի են ունենում Ճիճապաղ ու Խանդաձոր գյուղերում։ Պաշարվածները ունենում են տաս վիրավոր և երկու սպանված, դրավում են երկու գնդացիր, քառասունից ավելի հրացան ու բավական փամփուշտ։ Թշնամին, տեսնելով խոտորջուրցիների դիմադրությունը, նահանջում է թուրքական Հունուտ գյուղը։

Մի քանի օր հետո, Վեհիպ փաշայի զորամասն ու չեթե ջարդարարները թեթև կռիվներից անցնում են ուժեղ հարձակման Խոտորջրի մի քանի գյուղերի վրա։ Թուրքերը, թեև զինված էին նոր տիպի զենքերով ու գնդացիրներով, դարձյալ ստիպված են լինում նահանջել։

Նոր ուժեր ստանալով, թուրքական զորամասը երրորդ ուժեղ հարձակումն է գործում։ Խոտորջուրցիները հերոսաբար դիմադրում են, սակայն վերջում, թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ, թողնում են Ճիճապաղ գյուղն ու գնում Կրման, որը հեռու էր Ճիճապաղից կես ժամվա ճանապարհով։

Խոտորջրցի մարտիկները դիշերը մնում են Կրման գյուղում, իսկ առավոտյան բարձրանում են Հանկրման (Կրման գյուղի ամառանոցը), որտեղից պատգամավորների միջոցով խորհրդակցում են Մոխուրկուտ գյուղի հայրենադարձների հետ։ Որոշվում է զինված խմբի հետ Հանկրմանից Մոխուրկուտ տեղափոխել բոլորին։

Մոխուրկուտում կայանում է զինվորական խորհրդակցություն, և որոշվում է ինքնապաշտպանության գործը տանել մինչև վերջ, կռվել ու գիմադրել մինչև արյան վերջին կաթիլը։ Հրամանատարության տակ եղած 85 զինվորներին բաժանում են հինգ խմբերի, որոնցից չորսը (մոտ 55 զինվոր) տեղավորվում են գյուղի զանազան տներում, իսկ 30 զինվոր՝ Մարիամ Աստվածածին կոչված բարձրադիր ու լերկ քարաժայռերով պատած բերդում։ Այստեղ են պատսպարվում նաև կանայք ու երեխաները բերդում եղած զինվորների հետ միասին։ Խմբապետներ են նշանակվում Քերոր Ամրազյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը, Սգուստինոս Սչենյանը, Վահան Բաշարատյանը, Կարապետ Պապյանը և Հակոբ Միկիչյանը։

Բոլոր խմբերը գնում են նշանակված դիրքերն ու պատրաստ վիճակում սպասում կռվի վերսկսվելուն։ Չնայած Խոտորջրի մարտիկներն ամեն կողմից շրջապատված էին թշնամու զորամասերով և ոչ մի տեղից հույս չունեին օգնության, բայց նրանց ոգին չի ընկճվում։ Հայրենասեր մարտիկների տրամադրության վրա չեն ազդում նաև հայրենի աշխարհի ցրտաշունչ ձմեռն ու սառնամանիքը։

1918 թ. ձմռանը շարունակվում է պայքարը հայրենապաշտպան մարտիկների և թուրքական ջարդարարների միջև։ Մի գիշեր թշնամին, օգտվելով մառախուղից, ուժեղ հարձակում գործելով մտնում է գյուղն ու դրոհում այն տների վրա, որտեղ հայրենապաշտպանների դիրքերն էին։ Սկսվում է կատաղի կռիվ դազազած թշնամու և Խոտորջրի մի բուռ հերոսների միջև։ Թուրք ջարդարարները տեսնելով, որ հրացանն ու գնդացիրները հայ քաջերին չեն կարող ահաբեկել ու լռեցնել, սկսում են ռումբեր նետել այն տների վրա, որտեղ խոտորջրցի մարտիկներն էին։

Մյուս առավոտյան կռիվը վերսկսվում է ավելի կատաղի ձևով։ Այս հերոսական գոտեմարտը տևում է մինչև ուշ գիշեր։ Թուրքերը, օգտվելով դիշերային մթությունից ու իրենց ռազմական առավելությունից, դրավում են Խոտորջրցի մարտիկների դիրքերին մոտիկ մի քանի տները։

Հետևյալ օրը անցնում է խաղաղ, առանց միջադեպի ու կռվի։ Բայց պաշարվածների վիճակը շատ է ծանրանում։ Վտանգավոր դրությունից դուրս գալու համար որոշվում է հրդեհել թշնամու դրաված տները, որպեսզի թշնամին իուճապի մատնվելով թողնի գյուղը։

Մրադրի իրագործումը հանձնարարվում է Քերոր Ամրազյանին, Պետրոս Կոկյանին և տիկին Ոլիֆին։ Կես գիշերին, երբ թշնամին հանգիստ քնած է լինում, հանդուգն մարտիկները, նավթի ամանները ձեռքներին, մեծ զգուշությամբ մտնում են թուրքերի դրաված տներն ու մի քանի տեղերից հրդեհում։ Կրակը արագ բռնկվում է ու տարածվում։ Հանկարծակիի եկած թուրք զինվորական ջոկատները խուճապի են մատնվում և մեծ կորուստներ տալով թողնում են գյուղը։ Հե-

---

4 Խոտորջրի հերոսամարտի մի քանի դրվագների և տեղի հայրենասերների խիզախությունների ու քաջությունների մասին տե՛ս Հ. Հուլունյան և Մ. Հաճյան, Հուշամատյան Խոտորջուրի, Վիեննա, 1964, էջ 361—368։

բոսամարտի մասնակից մի զինվորի օրագրում կարդում ենք, որ այդ օրը թուրքերի կորուստը 400 հոգուց ավելի էր։ Երբ խայտառակ պարտության լուրը հասնում է գլխավոր հրամանատար Վեհիպ փաշային, նա հրամայում է թնդանոթներ տանել Խոտորջուր։ Ստանալով թնդանոթները, թուրքական զորքերը «մարտ 8-ին և 15-ին կսկսին բերդը ռմբակոծել։ Սակայն անօգուտ։ Բերդը վիթխարի ժայռ մըն էր և անդրդվելի որևէ հարվածի առջև, թուրքերը հուսահատված պատերազմական դավ մը կփորձեն։ Անձրևոտ և մշուշային օդեն օգտվելով իրենց դիրքը կփոխին։ Իսկ պաշարվողները այս փոփոխությունը չեն իմանար և կխորհին բնության այս պարագային օգտվել և բերդեն փախչել հարմար տեսնված ուղղություններով. կմտածեն դարձյալ թշնամիի բանակի մեջ շփոթություն ձգել և փախուստը անվտանգ գլուխ հանել»[5]։

Խոտորջրի մարտիկները, ամեն կողմից թշնամու գերազանց ուժերով շրջապատված, հինգ ամիս կանոնավոր զորքի և ջարդարար չեթեների դեմ կռվեցին և, ոչ մի տեղից օգնություն չըստանալով, ստիպված եղան դիմադրությունը դադարեցնել։

Եպիշկ Պետրոս Ավտալյանը Աստվածամոր բերդի հերոսամարտի մասին գրում է. «Մարդ սրտի սարսուռով, բայց հպարտության զգացումով է, որ կհիշե այն հերոսական դիմադրությունը և անզուգական ինքնապաշտպանությունը, որ բուռ մը խոտորջուրցիները մղեցին իրենցմե հազարապատիկ ավելի շատ թշնամիներու դեմ։ Ոչ պաշարող թշնամույն նենգամտությունը, ոչ կյանքի վտանգը, ոչ քաղցի ուրվականը, ոչինչ կարողացան սարսրեցնել հերոսներու վճռական որոշումը՝ մեռնել կամ ապրել քաջերու քաջությամբ։ Հիշենք դրվագ մը. Մոխուրկուտի բերդի դիմադրությունը, ուր հերոսությունն ինքնին կպատկերանա. ութ հազար թուրք կանոնավոր զորք և խուժան կպաշարին բերդը և շարունակ կռիվ կմղեն։ Չնայած չորս ամսվա ընթացքին կատաղի և արյունալից հարձակումներու և անթիվ զոհերու, թշնամիները թիզ մը առաջ չեն կրնար շարժել։ Երբ սրով, հրացանով և թվական մեծամասնությամբ անկարելի կըլլա հաղթել, թնդանոթի և լեռնային հրետանիի կդիմեն։ Անկից ալ օգուտ չեն ունենար։ Ի վերջո թշնամին մոայլ օդեն օգտվելով կհաջողի թնդանոթները բերդին հակառակ կողմը դետեղել։ Վերջնական հերոսամարտը կսկսի. 28 օր անընդհատ դիշեր ցերեկ ռմբակոծությունը կշարունակվի։ Երբ պաշարվողներու (ընդամենը 110 հոգի, բայց 40-ը միայն զինվարժության ընդունակ) մթերանոցը կպայթի, կորոշեն ոչ թե թշնամվոյն արդարադատության հանձնվիլ, այլ անոր բանակը ճեղքելով սարերը բարձրանալ — աղատ ապրիլ իբրև արծիվ, մեռնել իբրև առյուծ։ Այսօր քաջերու արյունով ներկված են Աստվածամոր մատուռին լերկ կողքերը։ Հերոսներեն շատերը փչացան թուրք զնդաններուն մեջ (14 հոգի միայն Տրապիզոնի բանդին մեջ) և դեռ ուրիշ շատ շատերու վերջնական ճակատագիրը անծանոթ մնաց։ Այո, ասիկա մեր դժբախտության հավելյալ տուրքն էր, բայց միևնույն ժամանակ մեր հպարտությունը և պարծանքի հանգանակը»[6]։

Պ. Ավտալյանը ճիշտ նկարագրելով Խոտորջրի հերոսամարտը, մեր կարծիքով թշնամու թիվը չափազանցնում է, երբ ասում է, թե ութ հազար թուրք կանոնավոր զորք և խուժան էին պաշարել բերդը։ Նա գրում է նաև, որ «28 օր անընդհատ դիշեր-ցերեկ ռմբակոծությունը կշարունակվի»։ Որքան մեզ հայտնի է, թուրքերի թնդանոթ բերելուց հետո կռիվը մոտ երկու շաբաթ է տևել։

Դիմադրությունը դադարեցնելուց հետո Խոտորջրի պաշտպանները բաժանվում են երկու խմբի։ Մոխուրկուտի Աստվածամայր կոչվող բերդում եղածները՝ զինվորները, այնտեղ պատրաստվող կանայք ու երեխաները, բերդից իջնում ու գնում են դեպի Ծորոխ։ Մինչև վերջն էլ չպարզվեց, թե նրանք ի՞նչ եղան, ո՞ւր գնացին, ի՞նչ վախճան ունեցան։

Մյուս մեծ խումբը, որ լեռներով գնում է դեպի Սև ծովի ափերը, ճանապարհին բռնվում է թուրքական զորամասերի կողմից և տարվում Աիզա քաղաքն ու այնտեղ բանտարկվում։ Սակայն խոտորջուրցիների հին բարեկամ ու մարդասեր լաղ Ապտուլլա Մամուշօղլու միջնորդության շնորհիվ դատը տեղափոխվում է Տրապիզոն։ Այստեղ էլ, դարձյալ Մամուշօղլու ջանքերով, գնդակահարությունը փոխարինվում է բանտարկությամբ։ Տրապիզոնի բանտում դատի ժամանակ խոտորջուրցիներից մնացել էին 24 հոգի և բոլորն էլ 101 տարվա բանտարկության են դատապարտվում. սակայն 24 հոգուց կենդանի են մնում միայն վեց մարդ, որոնք հետագայում ազատվում են։

Խոտորջրի հերոսամարտը թուրք ջարդարարների դեմ հայ ժողովրդի մղած ինքնապաշտպանական կռիվների մի փայլուն դրվագ է, որ արժանի է գիտական հատուկ ուսումնասիրության։

---

5 Հ. Հուլուքյան և Մ. Հաճյան, Հուշամատյան Խոտորջուրի, էջ 365—366։
6 Պ. Ավտալյան, Տայքի միություն, էջ 28—29։